

տական եմ»: Բայց այս տեսակէտը սխալ է: Իսլամն ալ իր հաւատացեալներուն մէջ որոշ համերաշխութիւն ստեղծած է. բայց այս հաւերաշխութիւնը ո՛չ թէ ազգային, այլ միջազգային է: Քրիստոնեաներու մէջ այս միջազգային ազդակը քրիստոնէական մշակոյթ մը առաջ բերած է, մահմետականներուն մէջ ալ իսլամական մշակոյթ մը: Սակայն, այս չի նշանակեր թէ իսլամական մշակոյթը բոլոր մահմետականներէն մէկ ազգ մը ստեղծեց: Չկայ «քրիստոնեայ ազգ» մը, չկայ հետեւաբար «մահմետական ազգ» մը: Մեծ մահմետական տան մէջ պէտք է գտնուին մասնաւոր սենեակներ Թուրքերուն, Արաբներուն, Պարսիկներուն եւն. համար: Արտաքին կառավարութիւնը, թշնամիներու յարձակման դէմ պաշտպանութեան գործը, ամբողջական վարչական մեքենան պէտք է տանիլ միացած. բայց ամէն ժողովուրդ իր բնակարանին մէջ պէտք է ազատ ըլլայ»:

Մարդ կը շուարի, թէ ինչի՞ շուրջ տեղի կ'ունենայ վիճարանութիւնը. Ռուսաստանի եւ անոր բաղկացուցիչ ամէն մի ժողովուրդի յարաբերութիւններն են քննութեան առարկան, Ռուսաստանի թուրքականութեան որպէս ամբողջութիւն եւ ամէն մի թուրքական ժողովուրդի փոխադարձ դե՞րքը, թէ՞, վերջապէս ամբողջ աշխարհի իսլամութեան եւ ամէն մի իսլամ ժողովուրդի, մասնաւորապէս թրքոթաթար «ազգի» յարաբերութիւնները . . . Ռոտման դէմ կը պաշտպանեն ապակեղրոնացման իրաւունքը, որո՞ւն հետ միութիւնը կ'ուզեն:

Արդարեւ կ'արժէ այստեղ հարցնել Րասուլզադէի՝ «Ֆեդերասիոն . . . բայց որո՞ւ հետ»: Որովհետեւ ան չի դադրիր միանգամայն պարելէ երեք՝ համառուսական, համաթրքական եւ համիսլամական ֆեդերասիոններու շարքերուն վրայ: Ան չի քաշուիր մինչեւ անգամ միեւնոյն ճառին մէջ, երկու անգամ գործածել միեւնոյն պատկերը (տունը եւ իր սենեակները) անգամ մը համառուսական, անգամ մը համիսլամական փեդեացիայի իմաստով:

Բայց շատ դժուար չէ ի վերջոյ դուշակել, թէ Րասուլզադէի ճշմարիտ եւ գերագոյն իդէալը համաթրքութիւնն է, որովհետեւ, զիչ մը այսպէս ծամծմելէ վերջ, ան կը շարունակէ.

«Այսօր թուրք ժողովուրդը ամենամեծ եւ ամենատեսեղ ազգութիւնն է իսլամական միջազգային եղբայրութեան մէջ: Մենք թրքոթաթարներս այս (թուրք) ազգին զաւակներն ենք եւ հպարտ ենք ատոր համար: Ռուսաստանի 30 միլիոն մահմետականներէն 29 միլիոնը կը պատկանին թուրք ժողովուրդին: Ռուսաստանի ազատ Թրֆո-Թաքարները պէտք է միանան:»

Այս է առաջադրութիւնը: Սակայն, Րասուլզադէի դիրքը ապակեղրոնական է անգամ թրքական Միութեան հանդէպ: Ուստի կը շարունակէ.—

«Բայց այս միութիւնը պէտք չէ բուն ըլլայ, որովհետեւ միայն բնական ճանապարհով իրագործուած միութիւններն են որ զօրաւոր ու տեսական կ'ըլլան: Թէեւ մենք, թրքոթաթարներս, մէկ ընդհանուր ազգ կը կազմենք, այս ազգին անդամներէն ամէն մէկը ունի իր առանձնաշատկութիւնը: Վոլգայի Թաթարները այսօր սեփական գրականութիւն ունին: Թիւրքիստանն ալ ունի իր հարուստ գրականութիւնը: Քրքըզը գրականութիւնն ալ սկսած է ծաղկիլ: Այս ժողովուրդներէն ո՛չ մին պիտի հաւանի առյաւէտ բաժնուիլ իր սեփական անդիր թէ զրաւոր դպրութեան: Ոչ մէկ օգուտ առաջ պիտի գար այդ առանձնաշատկութիւնները ջնջելէն: Ամէն ժողովուրդի գետը պիտի հոսի իր քնական հունէն: Օր մը գանազան քրքական գետերը պիտի քափուին մէկ մեծ, ընդհանուր քրքական ծովի մէջ» (ծափեր):

«Այս հիմին վրայ մենք կը պահանջենք առանձին տեղական ինքնավարութիւններ քուրք ժողովուրդի առանձին մասերուն համար, ինչպէս Թուրքիստանին, Դաղստանին, Քրքըզիսթանին, եւն: Այս ինքնավարութիւնները իրենց ներքին գործերը իրենք պիտի կառավարեն, իսկ միասին պիտի ունենան «ազգային խորհուրդ մը». ուրեմն՝ թրքական ժողովուրդներու խորհուրդ, անկախաբար դաշնակցային Ռուսաստանի բոլոր ինքնավար ժողովուրդներու ներկայացուցիչ մարմինէն՝ Զ.):»

Ասկէ վերջ Րասուլզադէ կը մտնէ իր ծրագրի մանրամասնութիւններուն մէջ.—

«Թուրք ժողովուրդի բոլոր անդամներուն բնական ճանապարհով միացումը ա՛յսպէս կը